ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 166

ք. Երևան 24.02.2025թ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի միջև 17.04.2024թ. կնքված N ՄԱԾՁԲ-24-8-19 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) համաձայն՝ վերջինս պարտավոր էր 2024թ. 2-րդ եռամսյակում մատուցված տպագրական ծառայությունների արդյունքում մատակարարել ապրանքներ, սակայն վերոնշյալ պայմանագրի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 19-րդ, 21-րդ, 22-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 36-րդ, 38-րդ, 39-րդ, 43-րդ, 44-րդ, 45-րդ, 46-րդ և 54-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները ամբողջությամբ չեն մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետը՝ (խախտվել է ծառայության մատուցման ժամկետը) ՀՀ պաշտպանության նախարարությունը 13.02.2025թ.-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը վերոնշյալ չափաբաժինների մասով:

Հաշվի առնելով, որ «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն խախտել է Պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության պահանջները, որոշում եմ՝ «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ